ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/84-2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ

ԱՆԴՐԱՆԻԿ ՇԱՄԻԼՅԱՆԻՑ

Հարգելի տիկին Գրիգորյան,

ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/84 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ՀՀ Առողջապահության նախարարության և «Պրիմա Լաբ» ՍՊԸ-ի միջև 13.12.2024թ.-ին կնքվել է թիվ ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/84-2 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում 29.01.2025թ.-ին «Պրիմա Լաբ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է «ցենտրիֆուգ»՝ թվով 4 հատ: Մատակարարված ապրանքի վերաբերյալ 12.02.2025թ .-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից տրվել է բացասական եզրակացություն՝ նշվելով այն կետերը, որոնք չեն համապատասխանում Պայմանագրում ներառված տեխնիկական բնութագրի պայմաններին: Թվով 4 ցենտրիֆուգերը ի պահ են վերցվել ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ում՝ մինչև «Պրիմա Լաբ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի պայմաններին համապատասխանող ցենտրիֆուգերով փոխարինելը: Մինչ օրս «Պրիմա Լաբ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների հետ կայացել են բազմաթիվ հանդիպում-քննարկումներ թե՛ Առողջապահության նախարարությունում և թե՛ «Յոլյան» կենտրոնում, սակայն ցենտրիֆուգերը այդպես էլ չեն փոխարինվել:

Վերոնշյալով պայմանավորված և հիմք ընդունելով Պայմանագրի 2-րդ կետի դրույթները՝ առաջարկում եմ միակողմանի լուծել պայմանագիրը և հայտարարել ցենտրիֆուգերի ձեռքբերման նոր ընթացակարգ:

ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/84-2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՇԱՄԻԼՅԱՆ